

ԻՍՐԱՅԷԼԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԻՑՀԱԿ ՌԱՊԻՆ ՍՊԱՆՆՈՒԱՄ 1922-1995

Իսրայելի եւ Պաղեստինի ղեկավարներու միջեւ խաղաղութեան եւ ինքնավարութեան իրաւական խորհրդակցութեանց եւ դաշինքի աշխատանքները առաջ կը տարուէին Միջին Արեւելի Արաբ երկիրներու Վեհապետներու եւ Միացեալ Նահանգաց Նախագահի գործակցութեամբ, հակառակ երկուստեք ընդդիմադիր խմբակներու յարուցած դժուարութեանց եւ խոտվութեանց, երբ Նոյեմբեր 4 շաբաթ գիշեր, խաղաղութեան ի նպաստ հրապարակային բազմամրոյս հաւաքոյթի մը աւարտին, 27 տարեկան փաստաբանութեան ուսանող համալսարանական երեսայ երիտասարդ մը, մահացու երեք փամփուշտներ կրակելով կը սպաննէ Իսրայելի Վարչապետ Իցհակ Ռապինը, երբ ան իր ինքնաշարժին կը մօտեմար:

Այդ թուականէն մի քանի շաբաթներ առաջ, 17 Հոկտ. Երեւշաբթի յետ միջօրէին, Յունաց Պատրիարքի Համբարձման լերան բնակարանին մէջ, ի գնահատութիւն խաղաղութեան համար իրենց տարած ջանքերուն, Թէ՛ Վարչապետ Իցհակ Ռապին եւ Թէ՛ Արտաքին Գործոց Նախարար Շիմոն Բերեկ, ստացեր էին հայ ոսկերիչի ձեռքով պատրաստուած մասնաւոր շքանշաններ: Այդ հաւաքոյթին ներկայ էին Պատրիարք Սրբազան Հայրը եւ Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Երկուշաբթի, Նոյ. 6ին, Հերձել գերեզմանատան մէջ, Իցհակ Ռապինի թաղման արարողութեան մասնակցեցան մօտ քառասուն երկիրներու Վեհապետներ, նախագահներ եւ վարչապետներ: Ներկայ էին նաեւ Հայաստանի Հանրապետութեան

Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան եւ Արտաքին Գործոց Նախարար Վահան Փափագեան: Հոգեւոր Պետերու շարքին մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Սեւան Եպս. Դարիպեանի:

Միաբանութեան եւ Իսրայելի եւ Յորդանանի հայութեան ցաւակցութիւնը արտայայտող հեռագիրներ ղրկուեցան Իսրայելի նախագահ լեզեր Ուլազմանին, Արտաքին Գործոց Նախարար եւ անմիջապէս Առժամեայ Վարչապետ Նշանակուած Շիմոն Բերեկին, Քնեսէթ Խորհրդարանի Խօսնակ Շէվալի Ուլազին, եւ Այրի Տիկին Լիա Ռապինին:

13 Նոյ., Երկուշաբթի յետ միջօրէին, Քնեսէթ Խորհրդարանի մէջ ի յիշատակ Իցհակ Ռապինի մասնաւոր նիստ մը գումարուեցաւ, ուր խօսք առին Խորհրդարանի Խօսնակը, Առժամեայ Վարչապետը Շիմոն Բերեկ, եւ ընդդիմադիր նկատուած կողմի ներկայացուցիչը Նաթանիահու, դատաւարտելով ռերագործին արարքը, շեշտելով հայրենիքի ապահովութիւնը եւ «Տեւօքրացիայի» ուղիղ ըմբռումը: Հոգեւոր Պետերու շարքին ներկայ եղաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Աւագ Թարգման Տ. Ռաֆիէլ Վրդ. Պողոսեանի: